# Ի՞ՆՉ Է ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԸ՞

## ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄԸ ԿԱՄ ԱՅԼՈՑ ՎՆԱՍԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ

Կալիֆոռնիան միջոցներ է ձեռնարկում, որպեսզի պաշտպանի համայնքներին հրազենային բռնություններից այնպիսի գործիքներով, ինչպիսին է՝ հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման արգելքը, որը տեղական դատարանի կողմից ձեռնարկվող ժամանակավոր գործողություն է, երբ որևէ մեկը ինքն իրեն կամ այլոց ցնասելու վտանգի տակ է:

Արգելքը ստացող ճգնաժամում գտնվող որևէ մեկը չի կարող գնել կամ տիրապետել հրազեն կամ զենք, քանի դեռ արգելքը գործում է:

Այս ժամանակավոր արգելքները հնարավորություն են տալիս կալիֆոռնիացիներին միջամտել, պաշտպանել ճգնաժամում հայտնված անհատների իրավունքները և ըստ օրենքի չեն համարվում պատիժ:

### ԵԹԵ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՔ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՀԱՄԱՐ, ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ԱՌՑԱՆՑ ԵՎ ՁԵՐ ՏԵՂԱԿԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ: ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՉԿԱ ՈՐԵՎԷ ՎՃԱՐ:

1. Լրացնել ձեր դատական թղթերը և պատրաստվել դիմելու համար
2. Ներկայացնել ձեր միջնորդությունը գործավարին
3. Ետ ստանալ ձեր միջնորդությունը գործավարից
4. Կազմակերպել այնպես, որ դատական արգելքը փոխանցեք ճգնաժամում հայտնված անձին

### Ինչ է հարկավոր իմանալ հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքների վերաբերյալ

Եթե դուք կամ ձեր սիրելին գտնվում եք խիստ ճգնաժամում և ինքներդ ձեզ կամ այլոց վնասելու անմիջական վտանգի տակ, ապա զանգահարեք 911:

Cal OES
GOVERNOR'S OFFICE
OF EMERGENCY SERVICES

### Ով կարող է դիմել հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի համար Կալիֆոռնիայում՝

- Ընտանիքի անդամ
- Նույն սենյակում ապրող ներկայիս կամ նախկինում ապրած անձ
- Գործատու կամ գործընկեր
- Միջին, ավագ դպրոցի, քոլեջի կամ համալսարանի ուսուցիչ կամ աշխատակից
- Անհատ, ով ունի ընդհանուր երեխա կամ ժամադրվում է
- Իրավապահ մարմիններ

### ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Պահանջ ներկայացնելու համար օգնության կարիք ունեք՞ Իրավական օգնությունը կարող է հասանելի լինել LawHelpCA.org կայքէջում և ձեր դատարանի Ինքնօգնության կենտրոնում՝ www.courts.ca.gov/selfhelp-selfhelpcenters.htm

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք gunsafety.ca.gov կայքէջ